

«Խոսք և հաղորդակցություն» ժամերը մայրաքաղաքի համալսարանում

Մայրենիի առարկայական չափորոշիչն ու ծրագրերը կարևորում են աշակերտների խոսքի զարգացումը, մասնավորապես՝ հաղորդակցական կարողությունների ձևավորման խնդիրների տեղի և դերի որոշման հարցում: «Մայրենի» առարկայի նպատակն առաջին հերթին աշակերտների խոսքի և մտածողության զարգացումն է, լեզվի հաղորդակցական գործառույթի իրականացումը: Կապակցված խոսքի հմտությունների ձևավորումը, բառապաշարի հարստացումը աշակերտների խոսքի լեզվական-քերականական կառուցվածքի մշակումը պետք է ծառայեն այս գլխավոր նպատակին՝ մայրենիով գրագետ և արդյունավետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Հաղորդակցական կարողությունների և հմտությունների ձևավորման արդյունքում սովորողները պետք է կարողանան.

. հասկանալ ուրիշների տեսակետը և դիրքորոշումը, որը տարբերվում է սեփականից,

. համագործակցելիս հաշվի առնել տարբեր տեսակետները և ձգտել համակարգել տարբեր դիրքորոշումները,

. հարցեր տալ,

. խոսքն օգտագործել իր գործողությունների կանոնակարգման նպատակով,

. համարժեք օգտագործել խոսքային միջոցները՝ տարբեր հաղորդակցական խնդիրների լուծման համար,

. մենախոսական խոսք կառուցել, երկխոսության մասնակցել,

. համատեղ գործունեության ընթացքում ընդհանուր որոշում կայացնելիս կարողանալ փաստարկել իր դիրքորոշումը և համադրել այն գործընկերների դիրքորոշման հետ,

. արդյունավետորեն լուծել կոնֆլիկտները՝ բոլոր

մասնակիցների շահերը և դիրքորոշումները հաշվի առնելու հիման վրա,

. գրուցակցին անհրաժեշտ տեղեկատվությունը հաղորդել որոշակիորեն ճշգրիտ, հետևողական և լիարժեք,

. համագործակցելիս փոխադարձ օգնություն և վերահսկողություն իրագործել:

Տարրական դասարաններում, կարևորելով հարցի լրջությունը, տարիներ ի վեր ուսուցիչներին խորհուրդ է տրվել մայրենիին հատկացված ժամաքանակից, իբրև անհրաժեշտ բաղադրիչ, շաբաթական ժամերից մեկը հատկացնել աշակերտների խոսքային կարողությունների զարգացման խնդիրներին՝ բաղադրիչն անվանելով «Խոսք և հաղորդակցություն»: Մա միանգամայն հիմնավորվում է այն հանգամանքով, որ առարկայական ծրագրերում առկա են հետևյալ բաղադրիչները՝ «Խոսքային գործունեություն» և «Կապակցված խոսք», որոնք կոչված են վերոնշյալ խնդիրների լուծման նպատակին:

Այլ խոսքով, այսօր առավել քան արդիական է այդ տիպի դասերի տեսակների և կառուցվածքի հետ կապված հարցերի մշակումը:

«Խոսք և հաղորդակցություն» ժամերի առանձնահատուկ հատկանիշներից մեկը խոսքային գործունեության հիմնական տեսակների (կարդալ, գրել, լսել, խոսել)



ուղղությամբ կազմակերպված համակարգված և նպատակաշարժված աշխատանքները Բանն այն է, որ միայն կապակցված խոսքի հմտությունների ուսուցումը չի կարող սպառել հարցի ողջ բազմազանությունը, քանի որ հանգեցնում է միայն աշակերտների տեքստերի վերաբերյալ արտահայտվելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Այս աշխատանքներում բառապաշարի հարստացման, աշակերտների խոսքի լեզվական-քերականական կառուցվածքի մշակմանը զուգահեռ հաճախ անտեսվում են կյանքի տարբեր իրավիճակներում լեզվի հաղորդակցական գործառույթները և աշակերտների բարեկիրթ խոսքի մշակույթի ձևավորման խնդիրները: Այս ամենը պետք է հետևողականորեն և նպատակամետ ձևավորվեն հատուկ <<խոսքային>> դասերի ընթացքում: Այս ժամերի արդյունավետ կազմակերպումը կնպաստի հաջողությամբ իրականացնել լեզվի ուսուցման հաղորդակցական և գործառույթային մոտեցումը և կնպաստի աշակերտների խոսքի արդյունավետ զարգացմանը: Պետք է հստակ տարբերակել հարցի երկու կողմը. մայրենի լեզուն՝ որպես ուսումնական առարկա և մայրենին՝ որպես կրթության լեզու: Քանի որ կրթության լեզուն ճանաչողության հիմքն է, հետևաբար բոլոր ուսումնական առարկաները յուրացվում են դասավանդման լեզվի միջոցով: Մյուս կողմից՝ ուսումնական բոլոր առարկաներն էլ իրենց ներդրումն ունեն սովորողների լեզվական իրազեկությունների (կարողունակություն, կոմպետենցիա) զարգացման գործում, քանի որ բոլորն էլ կրթության լեզուն օգտագործում են գիտելիքները յուրացնելու և ներկայացնելու համար: Ուսումնառության, ուսուցչի և գրքի հետ հաղորդակցության ընթացքում է սովորողը յուրացնում բոլոր մյուս ուսումնական առարկաները: Ինչ ենք հասկանում արդյունավետ հաղորդակցություն ասելով: Այն ենթադրում է ճիշտ, արդյունավետ և տեղին խոսք, այսինքն այնպես կառուցել խոսքը, որ հնարավոր լինի լուծել հաղորդակցական խնդիրը, հասնել հաղորդակցական նպատակին: Օրինակ՝ ես ինչ-որ բան եմ խնդրում և ստանում եմ խնդրածս, ցանկանում եմ մխիթարել մեկին, և դա ինձ հաջողվում է, ուզում եմ զվարճացնել, և բոլորը ծիծաղում են և այլն: Այս տեսանկյունից կարող ենք խոսել հաղորդակցության հաջողության կամ անհաջողության, ինչպես նաև հաղորդակցական վրիպումների մասին, երբ հաղորդակցական խնդիրը չենք լուծում կամ մասնակի ենք լուծում:

Այս դասաժամերի համար կարող ենք ձևակերպել հետևյալ խնդիրները.

- . բառապաշարի հարստացում և աշակերտների խոսքի քերականական կառուցվածքի մշակում՝ խոսքային իրավիճակին համապատասխան ճիշտ, արտահայտիչ լեզվական միջոցների ընտրության պահանջով,
- . լեզվական կանոնների ուսուցում և դրանց նպատակահարմար ու տեղին գործածություն՝ կախված խոսքային իրավիճակից, իմաստից և արտահայտման ոճից,
- . աշակերտների <<ճիշտ>> խոսքի հիմնական հատկանիշների մշակում:

<<Խոսք և հաղորդակցություն >> ժամերի կառուցվածքը պայմանավորված է ուսումնական խնդիրների և խոսքային իրավիճակների բովանդակությամբ և նպատակներով: Այստեղ տեղ են գտել հետևյալ կառուցվածքային տարրերը.

- . հաղորդակցական նպատակի սահմանում և դրա իրագործման խոսքային

- միջոցների ընտրություն,
- .խոսքային իրավիճակի ներմուծում և խոսքի դրդապատճառի ստեղծում,
- .ուսումնական խնդրի որոշում և դրա լուծման եղանակների ու քայլաշարերի որոշում,
- .ուսումնական և խոսքային գործունեության կազմակերպում՝ գրավոր և բանավոր ձևերով արտահայտվելու միջոցով ,
- .ստեղծված տեքստերի և բանավոր պատումների ստուգում և վերլուծություն՝ հետագա շտկողական աշխատանքով ,
- .խոսքի իրականացված նպատակների ընդհանրացում և եզրահանգում:
- Աշխատանքները կարելի է բաժանել հետևյալ մասերի՝
 - .հաղորդակցություն
 - . հաղորդակցության տեսակները
 - .բարեկիրթ հաղորդակցություն
- .խոսքային ժանրեր

Շփում և հաղորդակցություն

Հաղորդակցությունը, շփումը մարդկանց փոխազդեցությունն է, որի արդյունքում.

ա) շփվողները որոշակի տեղեկատվություն են փոխանակում՝ այդպիսով ճանաչում շրջապատող աշխարհը, մարդկանց, ինքն իրեն (տեղեկատվական – հաղորդակցական գործառույթ),

բ) պլանավորում և կազմակերպում են իրենց գործունեությունը՝ կարգավորելով սեփական և գործընկերոջ վարքը (հաղորդակցական – կարգավորող գործառույթ),

գ) ազդում/ներգործում են շփվողների հուզական-զգայական ոլորտի վրա (աֆեկտիվ – հաղորդակցական գործառույթ),

Առաջադրանքները ձևավորում և զարգացնում են.

- . հաղորդակցվելու կարողություն
- ա) հաղորդակցական խնդիրների լուծում,
- բ) պատմությունների հորինում,
- գ) հաղորդակցական իրադրություններում կողմնորոշվելու կարողություն,
- դ) շփման խոսքային և ոչ խոսքային միջոցների տեղին օգտագործում
- . հաղորդակցությունը վերլուծելու կարողություն (հնարավոր տալ երեխաներին հասկանալ, գիտակցել հաղորդակցման դերը իր կյանքում, մտածել, վերլուծել շփման իր փորձը, խոսել դրա մասին, գնահատել հաղորդակցման իր կարողությունները, բարելավել դրանք):
- Լավ կլինի, որ, բացի դասագրքի նյութերից, գործածվեն նաև այլ առաջադրանքներ:

Մարդը չի կարող մենակ ապրել

Կարելի է երեխաների հետ խոսել այն մասին, որ մարդը չի կարող ապրել մենակ, որ նա միշտ այլ մարդկանց հետ շփվելու, գրուցելու կարիք ունի: Եթե մի օր արթնանան և տեսնեն, որ մենակ են, կապի միջոցներ չկան, ոչ ոքի հետ չեն կարող շփվել, ինչպե՞ս կզգան իրենց: Կպատմեն, թե որոնք են միայնակ լինելու դրական և բացասական կողմերը:

Ընդհանրացնելով տպավորությունները, պարզում ենք, որ մարդիկ շփվում են, որպեսզի.

- . ինչ – որ բան հարցնեն, իմանան,
- . ինչ – որ բան հաղորդեն, ասեն, պատմեն,
- . բարևեն, ողջունեն, հրաժեշտ տան,
- . շնորհավորեն,
- . բացատրեն կամ բացատրություն լսեն,
- . օգնեն կամ օգնություն խնդրեն,
- . իրենց ուրախությունը կամ տխրությունը կիսեն ընկերոջ հետ,
- . պարծենան, գլուխ գովեն,
- . մխիթարեն, հանգստացնեն և այլն:

3 - 4-րդ դասարաններ

Ինչպե՞ս ենք շփվում միմիանց հետ և ուրիշների հետ.

Կարելի է երեխաների հետ գրուցել այն մասին, թե մարդիկ ինչու և ինչպես են շփվում: Մենք ամեն օր խոսում ենք, լսում, գրում, կարդում, այսինքն հաղորդակցվում ենք մարդկանց հետ: Բայց միշտ չէ, որ հաջողվում է: Երբեմն չենք կարողանում համոզել մեր գրուցակցին, որ ճիշտ ենք ասում կամ չենք կարողանում վստահ պատասխանել դասը, թեև սովորած ենք լինում: Երբեմն ամաչում ենք, ինքնավստահ չենք լինում, ու դա խանգարում է հասկանալ մեր գրուցակցին կամ այնպես անել, որ մեզ հասկանան: Արդյո՞ք խոսելիս միշտ ենք հաշվի առնում, թե ում հետ, երբ, ինչ նպատակով ենք խոսում կամ գրում: Մարդիկ հաղորդակցվում են որոշակի նպատակով, հարցնել, իմանալ, ճշտել, ողջունել, շնորհավորել, բացատրել, պարզաբանել, ուրախությունը կիսել:

Առաջին դասարանում երեխաներին կարելի է առաջարկել դպրոց բերել իրենց ընտանեկան լուսանկարներից, որոնք պատվերում են տոնախմբություններ, ծննդյան օրվա դրվագներ, դպրոցական առաջին օրվա լուսանկարներ և պատմել դրանց մասին: Այս հնարքը մեծապես ընդլայնում է երեխաների խոսքի հնարավորությունները, քանի որ եթե դասագրքի լուսանկարի մասին նա գիտի միայն այն, ինչ պատկերված է, ապա ծննդյան օրվա մասին բազմաթիվ բաներ կարող է պատմել, որոնք <<կադրից դուրս են մնացել>>:

Բանավոր խոսքի զարգացման համար արդյունավետ գործիք է լինում այսպիսի առաջադրանքը՝ «Օրը սկսենք բարի լուրով», «Ինչ հետքերի բան եմ տեսել, լսել, իմացել, արել...», «Իսկ դուք գիտե՞ք որ...»:

Երեխաներին կարելի է առաջարկել ամեն օր դպրոց գալիս կամ դպրոցից տուն գնալիս ոշադիր հետևել շրջապատին, գտնել հետաքրքիր, տպավորիչ սյուժեներ, դեպքեր, իրադարձություններ, որոնց մասին հետո պիտի պատմեն դասարանում:

Ամեն օր առաջին դասի 10-15 բույները կարելի է տրամադրել «օրվա լուրերին», որի ընթացքում երեխաներից 5-6-ը կարող են պատմել իրենց նորությունները:

Կարևոր է շեշտը դնել նաև գրավոր հաղորդակցական կարողությունների զարգացման վրա: Այդ նպատակով կարելի է երեխաներին առաջարկել գրավոր ներկայացնել իրենց նորություններն ու լուրերը: Դրանք կարող են կոչվել «հետաքրքիր լուրեր», «գիտե՞ք արդյոք» և փակվում են դասարանի «Նորությունների պատին»: Ամեն շաբաթվա վերջում դասարանը քվեարկությամբ ընտրում է լավագույն լուրերը՝ ամենահետաքրքիր, ամենազարմանալի, ամենածիծաղելի, ամենահուզիչ և այլ անվանակարգերով:

Արդյունավետ հաղորդակցությունը երթադրում է նաև սեփական հույզերը ճանաչելու, կարգավորելու և կառավարելու, այդ մասին խոսելու, դիմացինի հույզերը ընկալելու, հարաբերությունների մեջ դրանք հաշվի առնելու կարողություն: Մարդիկ շփվում են նաև իրենց ուրախությունն ու տխրությունը, հիացմունքն ու զարմանքը, հրճվանքն ու ափսոսանքը, վախն ու անհանգստությունը և այլ հույզերն ու զգացմունքները կիսելու համար: Սեփական տրամադրությունը ճամաչելը, դրա մասին խոսելը, լավ կամ վատ տրամադրության պատճառները հասկանալը, վերլուծելը կօգնեն երեխաներին ավելի ուշադիր ու նրբանկատ դառնալ նաև ուրիշների տրամադրության նկատմամբ, այսինքն՝ կդառնան ավելի արդյունավետ հաղորդակցվողներ:

Երեխաների հետ կարելի է զրուցել հետևյալ հարցերի շուրջ.

.Ամենից հաճախ ինչի՞ց է քո տրամադրությունը ընկնում, ինչի՞ց ես տխրում:

.Իսկ ի՞նչն է քեզ ամենից շատ ուրախացնում,

.Իսկ գիտե՞ս, որ մարդիկ հաճախ կարողանում են փոխել և իրենց և ուրիշների տրամադրությունը: Դու այդպես կարողանում ես:

.Ինչ ես անում, երբ բոլորովին տրամադրություն չես ունենում:

Կարելի է առաջարկել երեխաներին ամեն օր գնահատել դասարանի տրամադրությունը:

Կարելի է նաև զրուցել նրանց հետ այդ մասին:

Նկատե՞լ էք, որ երբ տրամադրությունը բարձր է, ամեն ինչ ասես ավելի լուսավոր ու պայծառ է թվում: Իսկ երբ տրամադրություն չես ունենում, աշխարհն էլ, ասես, գորշ ու մռայլ է թվում:

Դասարանում յոթնաթերթ մի ծաղիկ կարելի է պատրաստել մի յոթնաթերթ թերթիկ շաբաթվա մեկ օրը կխորհրդանշի:

Ամեն օր դասարանի տրամադրությունը համապատասխան գույնով ներկել ծաղիկի մեկ թերթիկը: Մեկ շաբաթ անց կտեսնենք, թե ինչ գույներ կունենա ծաղիկը: Դա կլինի տրամադրության փոփոխությունների մեկ շաբաթվա ներկապնակը:

Աշխարհում շատ բաներ կան, որոնք սիրում ենք կամ չենք սիրում: Առաջարկել կազմել աղյուսակ և լրացնել հետևյալ նախադասությունները.

- ա) Ամենից շատ սիրում եմ, երբ...
- բ) Ինչ լավ է, որ...
- գ) Ամեն ինչ հրաշալի է, երբ...
- դ) Ամենից շատ չեմ սիրում, երբ...
- ե) Շատ տխուր բան է, երբ...
- զ) Տխրում եմ, երբ...

Բարեկիրթ ձևով օգնություն խնդրելը, օգնություն առաջարկելը կամ օգնություն ընդունելը նույնպես կարևոր կարողություններ են:

Օրինակ՝

- . Անձանոթ վայրում անձանոթից հարցրու քեզ անհրաժեշտ հասցեն:
- . Խնդրիր ավագ քրոջդ օգնել քեզ՝ տնային հանձնարարությունը կատարել:
- . Քո օգնությունն առաջարկիր ընկերոջդ դժվար առաջադրանքը կատարելիս կամ ծեր կնոջը փողոցն անցելիս:
- . Հյուրասիրիր սեղանի շուրջ նստած հյուրին՝ առաջարկելով այ կամ այն ուտեստը:

Թերթերն ու ամսագրերը հատուկ էջեր են ունենում, իսկ հեռուստատեսային հատուկ ժամեր կան, որոնք նախատեսված են գովազդների ու հայտարարությունների համար: Ի՞նչ է գովազդը: Երբ որևէ իր կամ մթերք գովազդում են, ասում են նրա լավ հատկանիշները, որպեսզի մարդիկ ցանկանան գնել այն: Իսկ հայտարարություններում մարդիկ բոլորին հայտնում են այն մասին, թե ինչ են առաջարկում, ինչ են ցանկանում, ինչ են գտել կամ կորցրել, ինչ են ուզում վաճառել կամ գնել:

Կարելի է առաջարկել գրել գովազդ դպրոցի մասին, որը կարդալուց հետո բոլոր երեխաները ցանկանալ գալ այդ դպրոցում սովորելու: Գովազդում պետք է հետաքրքիր ու գրավիչ ներկայացնել գովազդվող առարկայի առավելությունները: Վերնագիրն էլ պետք է գրավիչ ու հետաքրքիր լինի: Օրինակ՝ Աշխարհի ամենալավ դպրոցը:

Հաղորդակցության տեսակները

Մարդիկ շփվում ու հաղորդակցվում են տարբեր ձևերով՝ կախված հաղորդակցության նպատակից, տեղից, ժամանակից և հասցեատիրոջից: Ըստ այժմ լինում են.

- .խոսքային կամ ոչ խոսքային,
- .բանավոր կամ գրավոր,
- .միջանցնային կամ զանգվածային,
- .մտերմիկ կամ գործնական, պաշտոնական,

Խոսքային կամ ոչ խոսքային հաղորդակցություն

Մտքեր, ասելիք, հույզեր ու զգացմունքներ կարելի է հաղորդել և ընկալել ոչ միայն բառերով:

Օրանակ՝ Ինչպես ճանաչել տրամադրությունը

Կարելի է առաջարկել մտածել այն մասին, թե ինչպես են հասկանում իրենց շրջապատող մարդկանց տրամադրությունը, նույնիսկ եթե նրանք այդ մասին չեն խոսում:

Օրինակ՝ Ինչպես և ինչի՞ց են հասկանում, որ մայրիկը (հայրիկը, եղբայրը, ուսուցիչը և այլն) բարկացած է (ուրախ է, տխուր է և այլն):

Երեխաները կարող են ասել. «Երբ մայրիկը ափսեները լվանալիս բարձր չիկչիկացնում է, ուրեմն բարկացել է>>, «Երբ քույրիկը փակվում է իր սենյակում, ուրեմն տխրել է>>, «Երբ հայրիկը տուն մտնելիս քթի տակ երգում է, ուրեմն տրամադրությունը բարձր է>>:

Բաժանիր ժպիտդ ամենքին

Կարելի է այսպիսի գրույց անցկացնել. «Ձեզ դու՞ր է գալիս, երբ մարդիկ ժպտում են: Իսկ դուք հաճախ եք ժպտում մարդկանց: Գիտե՞ք որ ժպիտը գեղեցկացնում է բոլորին: Փորձեք նկատել ձեր ժպիտը»: Նկարելուց հետո վերլուծում են և պարզում «Ժպիտը փոքրիկ արևի է նման: Իսկ գիտե՞ք, որ ժպիտից կարող է ընկերություն ծնվել: Հայտնի «Ժպիտը» երգում ասվում էր, որ ժպիտից մռայլ օրը կարող է լուսավորվել, և երկնքում ծիածան է ծնվել, ժպիտի շնորհիվ անձրևը կդադարի և անտառը ուրախ կձափահարի, ժպիտից բոլորը ջերմանում են»:

Հանձնարարություն. Էլ ինչ կարող է ծնվել ժպիտից

. Փորձիր ասել, թե ինչի՞ է նման մայրիկիդ կամ ուսուցչուհուդ ժպիտը:



- . Պատկերացրու, որ մի օր արթնացել ես, ու պարզվել է, որ շատ գարգացած ես ժպտալ, ո՛չ ծիծաղել, քանի որ «կորցրել ես ժպիտդ»: Ի՞նչ կլինի, ինչպե՞ս կապրես: Հեքիաթ հորինիր կորած ժպիտի մասին
- . Փորձիր մի այնսպիսի նկար կամ ծաղրանկար նկարել, որ խոսքերի կարիք չունենաս:
- . Նկարել քաղաք՝ իր ցուցանակներով: ցուցանակները կարող են լինել բառերով և խորհրդանշան- նկարներով:

Բանավոր և գրավոր հաղորդակցություն

Երեխան դպրոց է գալիս հիմնականում մայրենի լեզվի բանավոր խոսքին ազատ տիրապետած և դպրոցում պետք է զարգացնի այն, ինչպես նաև տիրապետի գրավոր խոսքին: Երեխաներն արդեն գիտեն, որ բանավոր խոսքը հաղորդակցության միջոց է, դրանով շփվում և հաղորդակցվում են շրջապատի հետ: Նրանք հասկանում են նաև գրի կարևորությունը, բայց պետք է, որ գան նաև դրա անհրաժեշտությունը: Գիրը միայն այն ժամանակ է իմաստ ձեռք բերում, երբ բանավոր խոսքով հաղորդակցվելու հնարավորություն չկա, երբ անհրաժեշտ է «խոսել» նրանց հետ, ով հեռվում է: Թե՛ բանավոր, թե՛ գրավոր խոսքի յուրացումը ոչ միայն ուղղագրություն, բառեր կամ քերականական գիտելիքներ պիտի հաղորդի երեխային, այլ նախ և առաջ զարգացնի նրա բանավոր ու գրավոր հաղորդակցական կարողությունները:

Հանձնարարություն

Պատկերացրու, որ մի ամառային լուսնյակ գիշեր արթնանում ես և տեսնում, որ քո սենյակում մի այլմուրակային է հայտնվել: Նա շատ համակրելի է և, որ զարմանալի է, հրաշալի խոսում է հայերեն: դուք իհարկե, ընկերանում եք, և նա քեզ առաջարկում է մի «փոքրիկ» տիեզերական զբոսանք կատարել: Դու չես ուզում մայրիկին արթնացնել և փոքրիկ նամակ-գրություն ես գրում, որ նա չանհանգստանա: Ի՞նչ կգրես:

Բարեկիրթ հաղորդակցություն

Բարեկիրթ շփման, հաղորդակցության կարողությունների զարգացումը տարրական դասարաններում մի քանի խնդրի լուծում է ենթադրում.

- . տարբերակել բարեկիրթ և ոչ բարեկիրթ խոսքն ու պահվածքը, բարեկիրթ խոսքի հնչերանգը,
- . իմանալ բարեկիրթ, սիրալիր բառեր, բառակապակցություններ,
- . կարողանալ կիրառել դրանք խոսքային տարբեր իրավիճակներին համապատասխան: Ուսուցչի հանձնարարությամբ երեխաները թվարկում են ողջույնի, բարևի իրենց իմացած խոսքերը, բառերն ու արտահայտությունները: Դրանք գրում են գրատախտակին և փորձում են տարբերակել, թե դրանցից որը երբ, ում և ինչ իրավիճակում է ամենից հարմար ասելը:

Հանձնարարություն

- . Լրացնել աղյուսակը

Ինչ էս ասում
ողնունելիս

ՈՒՄ էս
ողջունում

. Կարդալ «Շնորհակալությունը ներեցեքը խնդրեմը» հեքիաթը և քննարկել

ա) Ե՞րբ և որ իրավիճակներում ենք օգտագործում այդ բառերը:

բ) Ինչպե՞ս պետք է արտասանել այդ բառերը:

գ) Արտասանեք դրանք տարբեր հնչերանգներով և պատկերացրեք արձագանքները:

դ) Կազմեք երկխոսություններ և դերերով ներկայացրեք դրանք

Քաղաքավարի , բարեկիրթ, բարեհամբույր

Բարեկիրթ խոսքի առանձնահատկություններից է նաև քաղաքավարական տարրեր գրություններ գրելու կարողությունը:

Կարելի է տարբեր իրավիճակներ ստեղծել, որտեղ երեխաները ներողություն խնդրեն, ներկայացնեն իրենց կամ ընկերներին, ինչ-որ տեղ հրավիրեն , ընդունեն կամ մերժեն հրավերը, բարեկիրթ ձևով ցավակցեն կամ մխիթարեն՝ ճիշտ ընտրելով տոնը:

Խոսքային ժանրեր

Լեզուն նախ և առաջ կենդանի հաղորդակցության միջոց է, ուրեմն շատ կարևոր է ուսումնական տեքստերին նաև հաղորդակցական ուղղվածություն տալ, ինչը մեծապես կնպաստի երեխայի խոսքի և հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Տեքստը ընդհանուր թեմայով, հիմնական իմաստով և կառուցվածքով միավորված նախադասությունների խումբ է: Տեքստն ունի վերնագիր, որն արտացոլում է թեման կամ հիմնական իմաստը: Երեխան պետք է տարբերակի տեքստը նախադասությունների պարզ գումարից, բանալի-բառեր, պարբերություն, տեքստի հիմնական մասերը՝ սկիզբ, ընթացք, ավարտ:

Հանձնարարություն

. Ինչպես նախադասությունների խումբը տեքստ դարձավ:

Կարդում են իրար հետ ոչ մի կապ չունեցող նախադասությունների խումբ, այնուհետև՝ մոտավորապես նույն քանակի նախադասություններ ունեցող տեքստ: Քննարկման արդյունքում երեխաները հասկանում են, որ երբ նախադասությունները կապված են իրար հետ և պատմում են միևնույն բանի մասին, դրանք դառնում են մեկ ամբողջություն, որն անվանում ենք տեքստ: Իսկ այն, ինչի մասին պատմում է տեքստը, կոչվում է թեմա, որին առնչվող վերնագրեր կարող են առաջարկել:

Հասկանալ տեքստը , նշանակում է հասկանալ նրա գլխավոր միտքը, գաղափարը:

Հիմնական միտքը արտահայտվում է ամբողջ տեքստում, բայց դրա մասին կարող է հուշել տեքստի մի որոշակի նախադասություն, որը լինում է տեքստի սկզբում կամ վերջում:



Հանձնարարություն

Կրճատել որևէ տեքստ՝ թողնելով միայն իմաստային-կառուցվածքային հիմնական տարրերը (վերնագիր, սկիզբ, ընթացքը բնորոշող առանձին բանալի բառերը և արտահայտությունները, ավարտը) և առաջարկել դրանց օգնությամբ պատկերացում կազմել անձանոթ տեքստի մասին: Կարողալ տեքստի վերնագիրը, առաջին ու վերջին նախադասություններն ու բանալի-բառերը և վերականգնել տեքստը: Հետո կկարդան իսկական տեքստը և համեմատելով կիմանան՝ արդյոք ճիշտ էին կռահել պատմությունը:

Տեքստի տեսակները

Կան տեքստեր, որտեղ հիմնականում պատմվում է դեպքերի, հերոսների արարքների մասին: Այդպիսի տեքստերը կոչվում են պատմողական՝ (հեքիաթ, պատմվածք): Կան տեքստեր, որոնց մեջ հիմնականում նկարագրվում են մարդիկ, բնությունը, առարկաները: Այդպիսի տեքստը կոչվում է նկարագրական (հեքիաթ, պատմվածք, հանելուկ, հայտարարություն, գովազդ):

Կան տեքստեր, որոնցում հիմնականում բացատրվում են դեպքերի, երևույթների պատճառները, ապացուցվում է ինչ-որ բան: Այդպիսի տեքստերը կոչվում են դատողական բնույթի:

Հանձնարարություն

Երեխաներին առաջադրանք տալ իրենց կյանքից ու առօրյայից պատմություններ պատմել, նկարագրել, դատողություններ անել, հետևելով, որ պահպանվեն տեքստի տեսակի գլխավոր առանփնահատկությունները:

Մշակույթ

Մշակույթը հասարակության և մարդու պատմական զարգացումն է, որն արտահայտվում է մարդու գործունեության ձևերով և տիպերով:

Ինքնություն

Ինքնություն նշանակում է անձի՝ իր ով լինելու գիտակցումը և այն ինքնանկարագիրը, որոնց նա կարևորություն և արժեք է վերագրում:

Մշակութային երկխոսություն

Մշակութային տեսանկյունից բազմազան հասարակություններում ժողովրդավարական հաստատություններին պետք է մշակութային երկխոսություն:

Կոմպետենցիա

Կոմպետենցիան սահմանվում է որպես համապատասխան արժեքների վերաբերմունքի, հմտությունների և գիտելիքների փոխկապակցված ամբողջություն,

որն անհրաժեշտ է դրսևորել արդյունավետ արձագանքներ և պատասխանատվություն մարտահրավերներին և հնարավորություններին, որոնք առկա են ժողովրդավարական և միջմշակութային իրավիճակներում:

Մեթոդ

Մեթոդը ուսուցչի և երեխաների համագործակցություն է, որը միտված է նպատակին:

Պլանավորում

Պլանավորումը որոշակի գործողությունների հանրագումար է, որը միտված է մի շարք համալիր խնդիրների լուծման ուղիների որոնմանը և նպաստում է ինչպես անհատի, այնպես էլ հաստատության առջև դրված նպատակների արդյունավետ իրականացմանը:

Թեմատիկ պլանավորում

Թեմատիկ պլանավորումը փաստաթուղթ է, որում առարկայական ծրագրում ընդգրկված թեմաներից յուրաքանչյուրի բովանդակությունը տրոհվում է ըստ առանձին թեմաների, որոնց հաջորդական ուսուցումը հնարավորություն է ընձեռում ապահովել ծրագրում ամրագրված ակնկալվող արդյունքների ձեռքբերումը:

Միջնակարգ կրթության կարողունակություններ

- 1) լեզվական գրագիտություն
- 2) սովորել սովորելու կարողունակություն
- 3) ինքնաճանաչողական, սոցիալական կորողունակություն
- 4) ժողովրդավարական, քաղաքացիական կորողունակություն
- 5) թվային, մեդիա կարողունակություն
- 6) մշակութային կարողունակություն
- 7) մաթեմատիկական, գիտատեխնիկական կարողունակություն
- 8) տնտեսական կարողունակություն

Գնահատում

Սահմանում-Որոշում է սովորողի կարողությունների զարգացման աստիճանը ըստ առարկայական չափորոշիչների:

Ձևերը- միավորային ուսուցանող (ձևավորող)

Սկզբունքները- մատչելիություն, օբյեկտիվություն, հիմնավորվածություն, թափանցիկություն, հուսալիություն, արդարություն, անկողմնակալություն, հավաստիություն:

Տեսակները-Կիսամյակային ամփոփիչ, գրավոր աշխատանք, թեմատիկ գրավոր աշխատանք, գործնական աշխատանք, տնային աշխատանք:

Բանավոր հարցում

Անհատական թղթապանակ

Թեստ

Սահմանում-Թեստը առաջադրանքների ամբողջություն է, որոնցից յուրաքանչյուրը վեր է հանում անցած գիտելիքների որևէ մաս:

Տեսակներ-ընթացիկ, բանավոր, գրավոր, թեմատիկ գր. աշխ

Միավորային և հայտորոշող

Մշակման սկզբունքներ-պարզից բարդ, մատչելի հասկանալի ձևակերպումներով

Հատկորոշիչներ-Արտացոլի անցնելիք նյութը

